ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՕՍԱԱՖ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

Սույն համագործակցության հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) կնքվում է «Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամի (այսուհետ՝ Ինստիտուտ) և «Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) միջև:

Հաշվի առնելով, որ Կողմերն ընդունում են փոխադարձ համագործակցությունը և փորձի փոխանակումը.

Նկատի ունենալով, որ համատեղ համագործակցությունը հնարավոր է միայն կառուցողական փոխգործակցության և փոխօգնության կազմակերպմամբ.

Կարևորելով ուսանողների կարողությունների զարգացումը պրակտիկ ոլորտում.

Ընդունելով Ինստիտուտի և Կազմակերպության պատրաստակամությունը պրակտիկ համատեղ աշխատանքների իրականացման, ուսանողների գործնական պարապմունքների կազմակերպման համատեքստում.

Հիմք ընդունելով սույն Հուշագիրը և փոխադարձ պայմանավորվածությունները.

Կողմերը համաձայնեցին հետևյալի շուրջ՝

1. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Սույն Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ինստիտուտը և Կազմակերպությունը պատրաստակամ են «Հրաձգություն» առարկայի գործնական պարապմունքները անցկացնել Կազմակերպությունում:

2.2 Սույն Հուշագրով Ինստիտուտը և Կազմակերպությունը կարող են համագործակցել նաև՝

2.2.1 Ինստիտուտի կրթական ծրագրերի մշակման աշխատանքներում,

2.2.2 Երիտասարդ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության ոլորտում համատեղ իրականացվող ծրագրերի, գործնական պարապմուքների և այլ միոցառումների կազմակերպման աշխատանքներում,

2.2.3 Երիտասարդության, սահմանամերձ բնակավայրերի բնակչության մոտ նախնական զինվորական պատրաստության ուսուցման և առանձին միջոցառումների ձևով,

2.2.4 Սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման միջոցով,

2.2.5 Ինստիտուտի և Կազմակերպության գործունեության ոլորտներին առնչվող համապատասխան նյութերի հրատարակման գործում,

2.2.6 Մրցումների, հուշամրցաշարերի և մարզական տոների համատեղ կազմակերպման գործում,

2.2.7 Ռազմաուսումնական առաջնակարգ տեխնոլոգիաների փոխանակման, համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման շուրջ,

2.2.8 Կազմակերպությունում բուհի շրջանավարտներին համապատասխան ոլորտում աշխատանքի անցնելուն աջակցելու հարցերի շուրջ,

2.2.9 Համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու միջոցով:

3. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

3.1 Ինստիտուտը և Կազմակերպությունը սույն Հուշագրի սահմաններում իրենց գործառույթներն իրականացնում են օրինականության, փոխօգնության, համագործակցության սկզբունքներով:

4. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒԹՆԵՐ

4.1 Սույն Հուշագիրը կնքվում է երկու օրինակից հայերեն լեզվով, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

4.2 Սույն Հուշագրի լրացումներն ու փոփոխությունները համարվում են Հուշագրի անբաժանելի մասը:

4.3 Սույն Հուշագիրը չի առաջացնում ֆինանսական պարտավորություններ Կողմերի համար:

4.4 Յուրաքանչյուր Կողմ կարող է միակողմանիորեն խզել Հուշագիրը՝ այդ մասին մեկ ամիս առաջ տեղյակ պահելով մյուս կողմին:

4.5 Սույն Հուշագիրը կնքվել է Երևան քաղաքում, 2022 թվականի հուլիսի 11-ին:

4.6 Սույն Հուշագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում անժամկետ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինստիտուտ	**Կազմակերպություն**
«Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ» հիմնադրամ	«Հայաստանի ԴՕՍԱԱՖ» համահայկական հայրենասիրական հասարակական կազմակերպություն
ք. Երևան, Ալեք Մանուկյան 11	ք. Երևան, Արշակունյաց 5
Ռեկտոր՝ Դավիթ Խիթարյան	Նախագահ՝ Էդիկ Հակոբյան
ստորագրություն Կ.Տ.	ստորագրություն Կ.Տ.